

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐՔԱԳՈՒՄՆԵՐ

Գ. Ա. Մազույան

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Անցած քառասնամյակում հայ-վրացական գրական կապերի զարգացման գործում անգնահատելի նշանակություն ունեցան նախառեղյուցիկ շրջանի վրացի և հայ պայծառ մտածողներ և ջերմ հայրենասերներ Ակակի Մերթելու, Բլիա Ճավճավաձեի, Գաբրիել Սունգուկյանի, Հովհաննես Թումանյանի և այլոց կողմից հաստատված լավագույն տրադիցիաները:

Սովետական իշխանության տարիներին գնալով զարգացան ու նոր որակ ստացան հայ-վրացական գրական կապերը: Այդ կապերի ամրապնդման և ընդարձակման գործում մեծ գեր խաղաց Կոմունիստական պարտիայի իմաստուն ազգային քաղաքականությունը, որն ընթացք էր տալիս ազգերի եղբայրության բնական ձգտմանը, համախմբում էր Սովետական Միության ժողովուրդների ստեղծագործական ակտիվությունը լենինյան վեհ զաղափարների կենսագործման համար:

Անցած քառասնամյակում մշտական կենդանի կապ է եղել հայ և վրաց գրողների միջև: Այդ գործում իր նշանակությունն ունեցավ 1929 թ. մայիս-հունիս ամիսներին կազմակերպված անդրկովկասյան գրողների մերձեցման միամսյակը: Պրոլետարական գրողների Անգրկովկասյան համագումարները, Սովետական գրողների միություններ ստեղծելու համատեղ աշխատանքները, սովետական գրողների ռեսպուբլիկական համագումարներում պատգամավորությունների փոխադարձ մասնակցությունը ամրապնդում ու նոր թափ էին հաղորդում այդ բարեկամությանը: Հանդիպումներն ու տեղական համագործակցությունը փոխադարձաբար արգասավորում էին եղբայրական գրականությունները:

* * *

Սովետական շրջանի հայ-վրացական գրական կապերը բնութագրելիս ամենից առաջ պետք է հիշատակել երկու ժողովուրդների կլասիկ ու ժամանակակից գրողների աչքի ընկնող ստեղծագործությունների փոխադարձ թարգմանությունների փաստը: Սովետական շրջանում աստիճանաբար լրացվում է կլասիկների ստեղծագործությունների թարգմանության պակասը: Շուտով թարգմանությունների մեջ իրենց պատշաճ տեղն են գրավում ժամանակակից գրողների ստեղծագործությունները:

Փոխադարձ թարգմանությունների գործում մեծ ակտիվություն է ցուցաբերում գրական մամուլը. Հայաստանում լույս տեսնող «Նոր ուղի» հանդեսում 1929 թվականին տպագրվում են Ալիո Մաշաշվիլու (Միրցխուլավա) «Ուրմուլի» բանաստեղծությունը, Ս. Զավաշիձեի «Առաջին տրակտորը» պատմվածքը և այլ երկեր: Նույն կարգով վրացական «Մնաթորի» գրական հանդեսը թարգմանում և տպագրում է Ստ. Զորյանի «Սպիտակ բաղաբը», Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակը», ինչպես և Զարենցի, Դ. Դեմիրճյանի և այլ սովետա-

հայ գրողների գործերը Այգ շնորհակալ աշխատանքը հետագայում շարունակում են գրական մամուլի այլ օրգանները՝ Փոխագարձ թարգմանությունների գծով խոշոր աշխատանք են կատարում Վրաստանի և Հայաստանի պետական հրատարակչությունները:

Սովետական շրջանում կատարված փոխագարձ թարգմանությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ այս շրջանում թարգմանություններն ստանում են կազմակերպված բնույթ, մի բան, որ բոլորովին բացակայում էր մինչև սովետական շրջանի թարգմանությունների մեջ, երբ գլխավոր գեր էին կատարում այս կամ այն թարգմանչի նախասիրությունները և մանավանդ հնարավորությունները: Այդ պայմաններում խոշոր էպիկական երկերի ամբողջական թարգմանություններ չեն կատարվել: Ներկայումս թարգմանությունների գործը ղեկավարվում է գրական կազմակերպությունների կողմից, ստանում պետական օժանդակություն, որի շնորհիվ հնարավոր է դառնում սիստեմատիկաբար թարգմանել հայ և վրաց գրականության լավագույն նմուշները: Ե՛րբայն այդ պայմաններում իրագործվեց Շոթա Ռուսթավելու «Վազրենավորի» հայերեն լիակատար թարգմանությունը, ինչպես և հայկական էպոսի՝ «Սասունցի Դավիթ» և այլ երկերի վրացերեն թարգմանությունը:

Պետք է նշել, որ թե՛ հայ և թե՛ վրացի թարգմանիչները մեծ պատասխանատվությամբ են մոտենում գործին: «Սասունցի Դավիթ» վրացի թարգմանիչներից Իլո Մոսաշվիլին իր աշխատանքի մասին գրել է. «Թարգմանելով այդ էպոսը, ես վիթխարի ստեղծագործական հաճույք էի զգում, գիտենալով, որ մեր աշխատանքը կծառայի երկու եղբայրական ժողովուրդների է՛լ ավելի սերտ մերձեցմանը»:

Սովետական տարիներին վրաց արձակի լավագույն նմուշները հայ ընթերցողին ներկայացնելու գործում շնորհակալ աշխատանք են կատարել Տ. Փլումյանը, Ա. Մեհրաբյանը, Ս. Ավչյանը, Հ. Ագուլյանը, Ա. Մուրվալյանը և ուրիշները: Հայ արձակը վրացերեն են թարգմանել նույն Ս. Ավչյանը, Լ. Կարապետյանը, Ա. Դավթյանը, Ի. Կուրբելաշվիլին, Ի. Տատիշվիլին և ուրիշները:

Պոեզիայի նմուշների թարգմանությանը մասնակցել են սովետահայ և սովետական վրացական գրականության բոլոր առաջատար ներկայացուցիչները: Հայ բանաստեղծների վրացերեն թարգմանությունը մեծ սիրով և հմտությամբ կատարել են Ի. Դրիշաշվիլին, Տ. Տաբիձեն, Ս. էուլին (Քուրիձեն), Ա. Մաշաշվիլին, Խուտա Բերուլավան, Ռեազ Մարգիանին, Սիմոն Ջիբովանին, Մաղվալա Մրկիշվիլին, Խարիտոն Վարգոշվիլին և ուրիշները: Հայ գրողներից վրաց պոեզիան գործիմացությամբ թարգմանել են Ավ. Իսահակյանը, Գ. Մահարին, Դ. Սալյանը, Վ. Նորենցը, Վեսպերը, Հ. Սահյանը և ուրիշները:

Ուշագրավ է, որ սովետական շրջանում հայ և վրաց գրականության երկերի խափանությունները զբաղվել են ոչ միայն գրողները, այլ նաև լեզվաբանները: Հայ-վրացական գեղարվեստական թարգմանությունների որակի, նրանց առանձին թերությունների վերացման շուրջը ելույթներ են ունեցել լեզվաբաններ Իլիա Աբուլաձեն և Գ. Սևակը: Ավելին, լեզվաբան Աբուլաձեն միայն տեսական բնույթի դիտողություններով չի սահմանափակվում. նա բնագրին հարազատ մնալով, վրացերեն է թարգմանում և 1936 թ. հրատարակում Ե. Չարենցի «Երկիր նաիրի» գործը:

Այս պայմաններում վրացերենից հայերեն և հայերենից վրացերեն թարգմանվեցին երկու ժողովուրդների լավագույն ստեղծագործությունները, ուստի

վրացի ընթերցողը հնարավորություն ստացավ ամփոփ գաղափար կազմելու հայ գրականության կլասիկ և ժամանակակից հեղինակների հիմնական երկերի մասին, ինչպես և հայ ընթերցողը ծանոթացավ վրաց գրականության հիմնական նմուշներին:

* * *

Վրացի և հայ գրողներն ու գրականագետները միևնույն ժամանակ լայն կերպով պրոպագանդել են վրաց և հայ գրականության լավագույն ստեղծագործությունները:

Հիշենք, թե ինչպիսի գուրգուրանքով է հայ գրականության մեջ պրոպագանդվել Ալեքսանդրե Ղազբեգիի ստեղծագործությունը: Այդ հեղինակի «Էլզուլա» և այլ երկեր հայերեն թարգմանվել են դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին: 1948 թվականին, երբ նշվում էր հայրենասեր գրողի ծննդյան 100-ամյակը, Երևանում, Հայաստանի քաղաքներում և գյուղերում լայնորեն տոնվեց այդ հոբելյանը: Գրողի կյանքի և գործունեության մասին հողվածներ տպվեցին նույնիսկ շրջանային թերթերում: Թարգմանվեցին Ղազբեգիի մի շարք երկեր, և հոբելյանական օրերին հայ ընթերցողի սեղանին գրվեց նրա նոր մի-հատորյակը:

Գ. Դեմիրճյանը Ղազբեգիի ստեղծագործության էությունը այսպես էր ներկայացնում հայ ընթերցողին.

«Ղազբեգիի ձայնը հնչում է արիաբար, նա կոչ է անում պայքարի, ազատության: Նրա հերոսներն իրենց մեջ մարմնավորում են աշխատավոր ժողովրդի լավագույն գծերը՝ բարեկամությունը, հերոսականությունը, հարգանքը ուրիշ ժողովուրդների նկատմամբ:

Ղազբեգիի ստեղծագործությունը ներթափանցված է ժողովրդայնությամբ: Ազատասեր, փառապանծ վրաց ժողովրդի զավակը վերցրել է ամեն ինչ իր ժողովրդից և վերադարձրել նրան հոյակապ պատմվածքներով: Ամեն ինչ նրա մոտ բնական է, ճշմարիտ, վեհ, ինչպես ինքը ժողովուրդը, ինչպես ինքը բնությունը»:

Ղազբեգիի ստեղծագործողի երկերի հմայքի մասին հիացմունքով է խոսել արձակագիր Ստ. Զորյանը: Հոբելյանական օրերին նա գրում էր.

«Իմ պատանության տարիներին կարդացած գրքերից մեկը եղել է Ա. Ղազբեգիի «Էլզուլա» վեպը, որն ինձ վրա թողել է այնքան ուժեղ տպավորություն, որ այժմ էլ ես հիշում եմ նրա հերոսներին, նրանց անկաշառ ազնվությունը, ընկերական սերտ միությունը և կամքի ուժը: Ինձ հիացնում էր այդ բոլորը և դրա հետ միասին երկի կուռ կոմպոզիցիան ու հեղինակի ռեալիստական, լակոնիկ ոճը:

Եվ այդ օրվանից Ղազբեգին իր խիզախ հերոսներով դարձավ իմ սիրած գրողներից մեկը»:

Կարծես հանրագումարի բերելով հայ գրականության մեջ Ղազբեգիի ստեղծագործության մասին եղած տեսակետը, Ավետիք Բսահակյանը եզրակացնում է.

«Ա. Ղազբեգիի «Էլզուլան» և «Զորի նահապետ Գոշան» ինձ սիրելի տվին վրացուն, և նրանց շնորհիվ վրացերենն ու վրացիները ինձ հարազատ գարձառ:

Վերցնենք մի այլ օրինակ. 1952 թ. նշվեց 18-րդ դարի նշանավոր բանաստեղծ Դավիթ Գուրամիշվիլու մահվան 160-ամյակը: Հայկական մամուլում հողվածներ զետեղվեցին նրա կյանքի և գրական ստեղծագործության մասին, թարգմանվեցին նրա «Դավիթիանիի» առանձին հատվածները: Հայ ընթերցողը առաջին անգամ ծանոթացավ Գուրամիշվիլու ստեղծագործությանը: Դուրամիշվիլին 18-րդ դարում օսմանյան և իրանական բռնապետությունների կողմից ճնշվող իր ժողովրդի ազատության հույսը կապում էր Ռուսաստանի հետ: Նա գտնում էր, որ վրաց գրականության ինքնուրույն զարգացման համար անհրաժեշտ է հրաժարվել իրանական պոեզիայի արհեստական ոճից և վերականգնացնել վրաց ժողովրդական բանահյուսության հարուստ տրագիցիաները: Գուրամիշվիլի քաղաքացու և ստեղծագործողի մեջ իրար են շաղկապվում վառ հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը: Այդ բոլորի շնորհիվ վրաց մեծ բանաստեղծը դառնում էր հայ ընթերցողի սիրելին: Հայ մտքի գնահատականը վրաց բանաստեղծի ստեղծագործության նկատմամբ ճիշտ արտահայտեց բանաստեղծ Նաիրի Զարյանը: Թբիլիսիում հոբելյանական երեկոյին արտասանած իր ճառում նա ասաց.

«Դավիթ Գուրամիշվիլու մեծությունն այն է, որ նա խորհեց սեփական ժողովրդի ճակատագրի մասին և գտավ նրա ճանապարհը: Դա ունի ժողովրդին միանալու ճանապարհն էր, ժողովուրդների եղբայրության ուղին: Ահա թե ինչու Գուրամիշվիլու հիշատակը նվիրական է ոչ միայն Վրաստանի, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների համար: Եղբայրության այն մեծ խոսքը, որ ասել է Գուրամիշվիլին, բխում է նաև մեր սրտից»:

Հայ գրականության մեջ բարձր է գնահատվել նաև Գուրամիշվիլու նորարարությունը: 1955 թ. Գուրամիշվիլու ծննդյան 250-ամյակի առթիվ «Մնաթուրի» հանդեսում տպված իր հողվածում Ստ. Զորյանը հատկապես՝ կանգ առնելով «Ուրախ ամառ» պոեմի լեզվի ու ոճի հարցերի վրա, գրում էր.

«Ինչպիսի՜ երանգներ, հոգեկան ինչպիսի՜ կորով և ինքնատիպ մտքեր կան այդ պոեմում... Եվ այդ բոլորը 18-րդ դարի սկզբի՜ն: Միայն իրոք մեծ գրողը կարող է ստեղծել այդպիսի բանաստեղծություններ, որոնք երկու հարյուրամյակների ընթացքում չեն հնացել, դեռ երկար ժամանակ չեն կորցնի իրենց ուժը և դարերի մեջ ջահի պես վառ կպահեն իրենց հեղինակի անունը»:

Նույն նպատակով, նույնպիսի կոնկրետ գծերով են ներկայացվել հայ ընթերցողին նաև վրաց կլասիկ և ժամանակակից այլ գրողների ստեղծագործությունները:

Վրաց գրողներն իրենց հերթին սրտաբուխ մեծարանքի խոսք են ասել հայ գրականության ներկայացուցիչների վերաբերյալ: 1936 թվականին ՍՍՌՄ գրողների միության պլենումում Տիցիան Տաբիձեն առաջ էր քաշում հայ բանաստեղծների ստեղծագործությունները թարգմանելու և ամբողջ Միության մեջ պրոպագանդելու խնդիրը: Նա նշում էր. «Ես ուզում եմ խոսել մեր եղբայրական ժողովրդի գրականության՝ հայ գրականության մասին: Ես կտամ Հայաստանի նախահոկտեմբերյան դրականության սթանչելի վարպետ Ավետիք Իսահակյանի անունը, որին թարգմանել է Բրյուսովը: Ես կհիշեցնեմ Եղիշե Զարենցի, այդ նշանավոր բանաստեղծի և արձակագրի, վարպետի ու նորարարի սնունդը: Ես կարող եմ տալ Նաիրի Զարյանի, Գուրգեն Մահարու, Ալազանի, Ազատ Վշտունու, Գ. Սարյանի, Նորենցի և մյուսների անունները: Մենք պետք է հանձն առնենք նրանց բանաստեղծությունները Միության բոլոր ժո-

դովորողների լայն ընթերցող մասսաների սեփականությունը դարձնելու աշխատանքը»:

Վրաց գրողները մեծ պատկառանքով են արտահայտվում Ավ. Իսահակյանի պոեզիայի մասին: Հիացած Ավ. Իսահակյանի ստեղծագործությամբ, բանաստեղծ Գիորգի Լեոնիձեն նրան անվանում է «հայոց, Կովկասի և ամբողջ Սովետական Միության պոեզիայի մոնումենտալ կաղնին»:

Դրամատուրգ և վիպասան Շավա Դագիանին դրվատանքի հետևյալ խոսքերով է բնորոշել Ավ. Իսահակյանի նշանակությունը ժամանակակից համաշխարհային գրականության մեջ.

«...Դյուիշ, ակնապարար են թանկագին Ավետիքի պոեզիայի փարթամորեն աճած ճյուղերը, իսկ կենսալից արմատները մխրճված են խոր, հայկական կուլտուրայի ընդերքում: Պառնասի բարձունքին է կանգնած նա, զրահամար էլ այնքան պարզ տեսանելի է ոչ միայն Հայաստանի, այլև բոլոր ժողովուրդների համար: Ու՛մ չեն հասնում նրա սքանչելի պոեզիայի կախարդիչ հնչյունները. դրանցով հիանում են ռուսը, ուկրաինացին, բելոռուսը, ադրբեջանցին, վրացին, ուզբեկը, չովաշը... բոլորը, բոլորը... և որքա՛ն ուրախալի է, որ նրան լավ են ճանաչում նաև արտասահմանում»:

Անշուշտ ճիշդ է վրաց գրական հասարակայնության վերաբերմունքը Շիրվանզադեի նկատմամբ: Շիրվանզադեն Վրաստանում սիրված գրող էր: Վրաց հասարակայնությունը բարձր էր գնահատում հայ վիպասանին և դրամատուրգին: Այդ էր պատճառը, որ վրաց գրողները իրենց մահախոսականում նշում էին, որ «պրոլետարական հեղափոխությունից հետո Շիրվանզադեն լիակատար անկեղծությամբ անցավ հաղթանակած պրոլետարիատի դիրքերը և հանձին նրա խորհրդային գրականությունն ստացավ լավագույն ու փայլուն ներկայացուցիչներից մեկին, գեղարվեստական խոսքի այն մեծ վարպետների պլեադայից, որոնց պրոլետարական հեղափոխությունը խլեց հին աշխարհից և կանգնեցրեց իր հաղթական դրոշի ներքո»:

Խորապես գնահատելով Շիրվանզադեի ստեղծագործության դաստիարակչական նշանակությունը, նրանք գրում էին. «Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի Ա. Շիրվանզադեի բարձր գեղարվեստական ստեղծագործությունը դարձնենք Վրաստանի ամեն մի բանվորի, ամեն մի կուլտնտեսականի սեփականությունը»: Դրանք լոկ խոսքեր չէին: Իրոք մեծ դրողի հիմնական երկերը թարգմանվել են և մի քանի հրատարակությամբ լույս են տեսել վրաց լեզվով:

Տասնամյակների ընթացքում կիրառվել են նաև եղբայրական գրականությունների պրոպագանդման մի շարք այլ ձևեր, որոնք տվել են գրական արդյունք: Այդ ձևերից ամենից առաջ պետք է հիշատակել եղբայրական գրականությունների նմուշների մտցնելը միջնակարգ դպրոցների ծրագրերի և դասագրքերի մեջ, ինչպես և Վրաստանի ու Հայաստանի պետական համալսարանների բանասիրական ֆակուլտետներում փոխադարձաբար հայ և վրաց գրականությունների դասընթացների ուսումնասիրության պրակտիկան: Անցած քառասնամյակում վրացական միջնակարգ դպրոցների դասագրքերում զետեղվել են Հովհ. Թումանյանի «Մի կաթիլ մեղրը», «Գիքորը», «Նվեր Վրաստանի բանաստեղծներին», Հ. Հակոբյանի, Ավ. Իսահակյանի, Շիրվանզադեի, Ն. Զարյանի ստեղծագործությունները: Հայկական դպրոցի դասագրքերում միշտ պատշաճ տեղ են ունեցել Շ. Ռուսթավելու «Վազրենավորի» հատվածները, Ի. Ժավճավաձեի «Ո՛վ իմ գեղեցիկ աշխարհ», Ա. Մաշաշվիլու «Ուրմուլին», Գ.

Տաբիձեի «էլզուլայի վերադարձը», Ակ. Մերեթելու, Ի. Գրիշաշվիլու և այլ հեղինակների բանաստեղծությունները:

Հայ և վրացի դրամատուրգների պիեսների փոխադարձ բեմադրությունները, արվեստի տասնօրյակների ընթացքում հանգամանալից ինֆորմացիաների տպագրությունը մամուլում, սիստեմատիկ գրական ռադիոհաղորդումները նույնպես նպաստել են հայ և վրաց ժողովուրդների գրական գանձերի փոխադարձ ճանաչմանն ու գնահատմանը:

* * *

Վրաց և հայ ժողովուրդներն իրենց զարգացման ճանապարհին առաջնորդվել են մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքով, կոմունիզմի կառուցման միասնական գաղափարով: Այդ հիման վրա նրանցից յուրաքանչյուրը խոշոր քայլեր է կատարել սոցիալիստական գրականության բարգավաճման ուղղությամբ: Նորը և ամենաբնորոշն այն է, որ հայ գրողները ոչ միայն սրտաբուխ բանաստեղծություններ են նվիրել Վրաստանին, այլև հաճախ իրենց ստեղծագործությունների հերոս են ընտրել վրացի աշխատավորին: Փոխադարձաբար նույնն են արել նաև վրացի գրողները:

Պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանն իր «Թիֆլիս» էպոպեայում պատկերել է Վրաստանի մայրաքաղաքի փառավոր հեղափոխական անցյալը, նաձաղկին ու Կոմունիստական պարտիայի դրոշով հին կարգերի դեմ գրոհի ելած Թբիլիսիի գործարանային պրոլետարիատի հերոսական գործերը: Նա Թբիլիսին համարում է իր հարազատ օջախը: Այստեղ բանաստեղծը, տակավին պատանի, մասնակցում է բանվորական ցույցերին, հազարավոր րմբոստների մարտակարգում զգալով, որ իր մեջ աճում, կոփվում է պայքարի զինվորը:

Բանաստեղծը հիացմունքով է հիշատակում վրացի ռևոլյուցիոներների այն փունջը, որի մեջ ինքն էլ է ծաղկել. նա զինակցել է վրաց ժողովրդի պանծալի զավակներ Սաշա Մուլուկիձեին, Սերգո Օրջոնիկիձեին, Միխա Ցխակալային, որոնցից ամեն մեկը դիտեր «ձուլել, կերտել և կռել միտք ու գաղափար»: Ռևոլյուցիայի հաղթանակից հետո Հ. Հակոբյանի գրած առաջին բանաստեղծություններից մեկը նվիրված է Ռիոնդէսի շինարարությանը և գովերգում է վրաց աշխատավորության առաջին խոշոր հաջողություններից մեկը սոցիալիստական շինարարության ասպարեզում:

Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ առանձին տեղ են բռնում եղբայրական Վրաստանին նվիրված բանաստեղծությունները: Վրաստանի Լենինյան կոմերիտիության հիմնադիր Բորիս Չնելաձեին նվիրված բալլադում նա Չնելաձեին համարում է մի նոր Աբիլլես, որ կործանեց Տրովադան կապիտալիզմի: Չնելաձեի բանակր մեծ է և ամենուր. դա աշխատանքի բանակն է, որ ամեն տեղ դրոհելու է հին կարգերի դեմ, Չնելաձեի անունը, նրա գործը խորհրդանշում է ամբողջ մարյկության դառթոնքը:

«Զուգունև մարդը» բալլադում Չարենցը խանդավառությամբ գովելով ում է սոցիալիստական շինարարության առաջնեկը Վրաստանում և Անդրկովկասում՝ Զեմո-Ավճալայի հիդրոկայանը (Զագէս), Լենինյան պատգամներով ոգեշնչված այն ճեմրոստ ժողովրդին, որ մի օր եկավ-բռնեց գետի ափերն ու խլրտաց, զսպեց գետի կատաղի հորձանքները, փոխեց սրբա հունը և դարձրեց լույսի, Լենգրիայի ու նոր մարդու Լրջանկության սղորյուր:

Վրաց ժողովրդի նկատմամբ անհուն սիրով է տոգորված Չարենցի «Տաղ սրտառուչ՝ եղբայրական Վրաստանին» ներբողը: «Արևակեզ տենչանքների երկիր» Վրաստանին և բանաստեղծի բարձրաբերձ հայրենիքին միշտ նույն վիշտն է դերել, նույն բազուկն է ճզմել, դարձնելով նույն կրակներին ողջակեզ: Սակայն Հոկտեմբերի արևը նրանց միասին տվեց փրկության լույսը. նրանք միասին վսեմ գոտեմարտի ասպարեզ իջան, թոթափեցին ստրկության լուծը՝

Եվ միասին ու միասիրտ՝ գնում ենք արդ հաղթական
Գեպի երգի, կյանքի, լույսի մի անարատ ապագա...

Իրենց հայրենիքի հաջողություններով խանդավառված վրացի աշխատավորներին է նվիրված Ավ. Իսահակյանի «Վրաց գուսանի երգը» հուզաթաթափ պատմվածքը: Այստեղ նա ջերմությամբ պատմում է վրացի հասարակ մարդկանց հետ ունեցած իր մի հանդիպման մասին: 1926 թվականին նա արտասահմանից վերադառնում էր հայրենիք: Բանաստեղծն առաջին անգամ էր ոտք դնում սովետական հողի վրա:

Բաթումում գնացք նստելով, նա իրեն շրջապատված գտավ զվարթ ու զրուցասեր վրացիներով: Նրան հիացրեց կույր գուսանի երգը:

Վրացի գուսանը երգում էր իր հայրենի Վրաստանի բարգավաճման մասին: Տարիներով հայրենիքից հեռու ապրած և նրա նոր կյանքին ղեռն անհաղորդ հայ բանաստեղծը հուզմունքով լսում էր նրա երգը: Գեղեցիկ ու անպաճույճ էր այդ երգը, սակայն, սրտաբուխ, այնպես, ինչպես կարող է լինել միայն ժողովրդական երգը: Այդ երգն ամեն ինչ ասում էր պանդխտությանից հայրենիք վերադարձող հայ բանաստեղծին.

«...Աշուն է հիմա, քո անտառները ոսկի են հագել և ոսկե փուլերով ծածկել են բույր կածանները:

Եվ քո եզնիկները վազում են ոսկեփայլ կածանների վրայով, իմ գեղեցիկ Սաքարթվելո:

Ես լսում եմ հիմա քո սրտի հրճվանքի ձայները, իմ քաղցր Սաքարթվելո:

Ես լսում եմ քո երջանկության ծիծաղը, քո ողորկների ուրախ երգերը:

Երիտասարդ կտրիճ զինվոր ես դառել հիմա, իմ հին Սաքարթվելո, հրեղեն ձի ես նստել հիմա, հրեղեն թուր ես կապել մեջքիդ և կարմիր դրոշակ ես բարձրացրել հիմա:

Այլևս ո՞վ կուրող է քո հացն ու ազատությունը խլել քեզնից, իմ քաջ Սաքարթվելո:

Ժողովրդի սրտից բխած այդ անկեղծ երգը անչափ հուզում է բանաստեղծին, դառնում առաջին քաղցր զգացմունքը իր վերածնված հայրենիքի մասին, որով թևավորված նա դաշտ ու լեռ կտրելով, թռչում էր դեպի իր հայրենիքի ոսկի հագած անտառները, ոսկե փուլերով ծածկված կածանները, լսելու նրա երջանկության ծիծաղը, տեսնելու նրա բարձրացրած կարմիր դրոշակը:

Բանաստեղծ Համո Սահյանի «Վրաց ժողովրդին» բանաստեղծությունը վրաց և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության կենարար ուժի ճշմարտացի վերարտադրությունն է: Բանաստեղծի համար նվիրական է հայ-վրացական բարեկամությունը, որը փոխադարձաբար արգասավորել է ու արգասավորել է նրանց եղբայրական ժողովուրդների կյանքն ու խոյանքները: Այն պետք է հավերժորեն ամրապնդվի, որովհետև

Մեր լեզուն է միայն տարբեր,
Իսկ դա ինչո՞ւ է վնասում,
Որ մարդկությանն ու դարերին
Նույն սրտադին խոսքն ենք ասում:
Եղբայրներ են ծնված օրից
Աշխարհում հայն ու վրացին,
Եվ դառնություն չի խառնվել
Երբեք նրանց աղ ու հացին:

Նույն խանդավառությամբ Հայաստանն ու հայ ժողովրդին են երգել սովետական վրացական գրականության ավագ ու կրտսեր սերունդների ներկայացուցիչները:

1931 թվականին «Մնաթորի» հանդեսում (№ 5—6) տպագրվում է բանաստեղծ Տիցիան Տաբիձեի «Հայաստանում» բանաստեղծությունների շարքը: «Հանուն Պուշկինի և Ռուսթավելու», «Բաղդադի երկինքը» և այլ բանաստեղծությունների կողքին, որոնք փառաբանում են Սովետական Միության բազմազգ ժողովուրդների կուռ դաշինքը, «Հայաստանում» բանաստեղծությունների շարքը գալիս է ամենանպաստավոր կերպով բնութագրելու այդ խանդավառ բանաստեղծի սովետական շրջանի ստեղծագործությունը: Տ. Տաբիձեն գովերգում է Հայաստանում սոցիալիզմի կառուցման ասպարեղում կատարվող հերոսական աշխատանքը, որին ականատես է ինքը, որը հրճվանք է պատճառում իրեն և Հայաստանի բոլոր բարեկամներին: Նա Հայաստանում ամենուրեք իրեն զգում է իր տանը, հիանում Ե. Չարենցի «էպիքական լուսաբացով», գերվում Մ. Սարյանի արևաշուշ կտավներով, հրճվում, որ Ավ. Իսահակյանի Աբու-լալա-Մահարին վրացական ոտանավորով է սկսել խոսել: Իր այդ բանաստեղծություններում Տ. Տաբիձեն կոչ է անում Կովկասի բանաստեղծներին այնպիսի երգեր հորինել, որոնք ժողովրդին կզինեն հավատով ու վստահությամբ իրենց մեծ գործի հաղթանակի նկատմամբ:

Սանդրո էուին իր «Հայաստանի գրողներին» ներբողում նշում է, որ երջանիկ են իր սերնդի վրաց և հայ բանաստեղծները, որովհետև արդեն չբացել են երեկվա դառնությունները: Կովկասի մղձավանջային անցյալը չի ընկճել նրանց. բոլոր փոթորիկների հանդեպ նրանք միշտ ամուր են պահել գալիքի դրոշմը: Այժմ այլ են ազգերի ուղին ու ձգտումները, ուստի բանաստեղծը պարտավոր է ըմբռնել էպոխայի նպատակը՝ և ծառայել նրան նոր խոսքով ու նոր երգով:

Այստեղ ամենահատկանշականն այն է, որ սոցիալիզմի դարաշրջանի վրաց բանաստեղծն իրեն զգում է հայ կյանքին անխզելիորեն կապված, երկրի բարգավաճմանը և կուլտուրական շինարարությանը լծված հայ գրողների շարքում, ուստի անկեղծությամբ հավաստում է իր հայ բարեկամներին.

...Այսօր դարկում է սիրտս երջանիկ
Անհաղթ բանակում նույն նպատակի,
Եվ դրոշակը նույն Հայաստանի
Ձեզ հետ ես էլ եմ բռնել իմ ձեռքում:

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների մեջ եղբայրական սիրո և համագործակցության ոգեշնչողը Կոմունիստական փառապանծ պար-

տիան է, նրա գաղափարներն են, որ միացնում են ժողովուրդների ջանքերը և նպատակաուղղում դեպի կոմունիզմ: Այդ իրողությունն է մարմնավորում ժողովրդական բանաստեղծ-ակադեմիկոս Գ. Լեոնիձեն իր «Հայաստան» բանաստեղծության մեջ, գիմելով հայ ժողովրդին, նա ասում է.

Եղբայրներ՝, հպենք մեր սրտերն իրար,
Զոդենք անձկալի հույզով անարատ,
Թող բոցավառվեն այդ հրով անմար
Թե՛ Մղինվարին, և թե՛ Արարատ...

Աղբյուրն այդ սիրո պարտիան է մեր մեծ,
Այդ նա է կռում մեր ուժը հզոր,
Վառվել են նրա լույսերով անշեշ
Մեր խոհերը բյուր, հույսերը բոլոր...

Եվ իր հայրենակիցների անունից կոչ է անում, այսպես, ուս-ուսի, ընդհանուր գալ կոմունիզմի վառ ապագային:

Իր զգացմունքների ամփոփանությամբ ու անկեղծությամբ սովետական դրականության մնայուն արժեքների թվին է պատկանում Ս. Զիքովանու «Եղբայրության ճամփաներում» ժողովածուն: Բանաստեղծն իր այդ գրքում լիրիկական ջերմությամբ գովերգում է հայ անխոնջ աշխատավորի քրտինքով արգասավորված հայկական հողի զարթոնքը «Նազանի», «Ֆերմայում» և «Վերադարձ» բանաստեղծություններում Զիքովանին հպարտության զգացմունքով է նկարագրում հայ աշխատավորների ստեղծած նոր կյանքը, իրենց բախտը կերտող հասարակ մարդկանց հերոսական աշխատանքը: Բանաստեղծը խոր կերպով ընկալում է Հայաստանի նոր բնանկարը. «Սևանի ճանապարհին», «Հայոց լեռներում», «Հրազդանի ափին» և այլ բանաստեղծությունների մեջ նա լնթերցողին տեսանելի է դարձնում, թե ինչպիսի հսկայական փոփոխություններ է կրել հինավուրց հայկական աշխարհը, պճնվել հոյաշեն կոթողներով, նոր, փարթամ երանգներով: «Սևանի ափին» բանաստեղծության մեջ հեղինակը շքեղ բնանկարին զուգընթաց ցուցադրում է Սևանի ափերին ծաղկող նոռ կյանքի հմայքը և հպարտանում իր հայ եղբայրների աշխատանքով, որոնք ստեղծել են այդ փարթամությունը.

Բայց մի՞թե իրենց սեզ լեռնաշխարհում
Հավերժ մայիս չեն հայերը կերտել.
Ես եղբայրության լույսն եմ փայփայում,
Հայոց աշխարհն եմ ես ուզում երգել:

«Երգ բարեկամության» խորագրով բանաստեղծությունների շարք է գրել Լուսին Նոնեշվիլին: Իր «Օջախ, դրոշ, ճշմարտություն» ինքնատիպ բանաստեղծության մեջ հեղինակը հայերենում և վրացերենում ընդհանուր այդ երեք բաների գաղափարական իմաստը մեկնաբանելով, ղրանք համարում է հայերի և վրացիների միասնության խորհրդանիշը, երկու ազգերի բարեկամության կուրդրահ, որի վրա ոսոխներն անցյալում իրենց թրերն են փշրել: Նոնեշվիլու այդ և մյուս բանաստեղծությունները անխառն հույզի, անկեղծ զգացմունքի արտահայտություն են:

* * *

Անցած ժամանակի ընթացքում խոշոր աշխատանք է կատարված նաև դրականագիտական ուսումնասիրությունների գծով: Սովետահայ և սովետական վրացական գրականության զարգացման տարբեր էտապների մասին հոգևածներով հանդես են եկել հայ և վրացի բանասերները, ստեղծվել են մի շարք մեծարժեք բանասիրական աշխատություններ:

Ինչպես տեսնում ենք, սովետական շրջանում պրոլետարական ինտերնացիոնալիզմի հողի վրա նոր ուժով ծաղկեց հայ և վրացի ժողովուրդների անխառն բարեկամությունը, որը դարերի խորքից էր գալիս: Այդ հիմքի վրա նրանցից յուրաքանչյուրն ստեղծեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգուն հարազատ նշանակալից գրական երկեր: